ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1716-22 առ "28" 07 2022թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2022թ.

«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ
տկն Գ.Հակոբյանին
E-mail: gayanehakobyan52@gmail.com

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-55/22-2-01/129 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ տիկին Հակոբյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հանդերձանք (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 14-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-55/22-2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 3,4,5,6,9,11,12,14,15,16 և 17-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ-ի միջև 2022թ. ապրիլի 20-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-55/22-2-01/129 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 8777817.60 (ութ միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր տասնյոթ և 60/100) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 6-րդ չափաբաժնով սահմանված 56 լրակազմ ամառային կոստյումը, որի ընդհանուր գինը կազմում է 782880 (յոթ հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ «Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ-ի կողմից չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:

- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

  Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1կետը այն է, գնորդը իրավունք ունի՝
- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ-ի հետ 2022թ. ապրիլի 20-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-55/22-2-01/129 պայմանագիրը 6-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60